ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՈՒՐԱՐՏԱԳԵՏԸ

1997 թ. մարտի 13-ին վախճանվեց անվանի ուրարտագետ, հնագետ, ազգային-հասարակական գործիչ Մարգո Իսրայելյանը։

Մարգո Ավագի Իսրայելյանը ծնվել է 1909 թ. Թիֆլիսում, արհեստավորի բազմանդամ ընտանիքում։ 1929 թ. տեղի մանկավարժական թեքումով հայկական թիվ 72 դպրոցն ավարտելուց հետո մոտ երեք տարի հայոց լեզու և գրականություն է դասավանդել քաղաքի հայկական դպրոցներից մեկում։ 1932 թ. Վրաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հատուկ դրծուղմամբ ընդունվում և 1937 թ. գերազանցությամբ ավարտում է Երևանի պետական համալսարանի պատմաբանասիրական բաժինը։ Լսելով մեծ եղբոր ձերբակալության լուրը՝ հրաժարվում է ասպիրանտուրա մտնելու առաջարկից և քաղաքական հետապնդումների հետևանքով որբացած ընտանիքին ձեռք մեկնելու նպատակով վերադառնում է Թիֆլիս, աշխատանքի անցնում տեղի հայկական դպրոցներում։ 1940 թ. ընդունվում է Երևանի պետհամալսարանի ասպիրանտուրան և ակադ. Գր. Ղափանցյանի ղեկավարությամբ խորանում ուրարտագիտության մեջ։

1943—1949 թթ. հայոց լեզու և ուրարտերեն է դասավանդել Երևանի համալսարանում, զուգահեռաբար աշխատել նախ՝ Հայաստանի պատմության պետական թանգարանում (1944—1945 թթ.), ապա՝ Հայաստանի ԳԱԱ Լեզվի ինստիտուտում (1946—1949 թթ.), որտեղ և փայլուն կերպով պաշտպանում է թեկնածուական ատենախոսությունը («Պատմական Արմավիրը՝ ըստ ուրարտական արձանագրությունների»)։

1949—1980 թթ. աշխատել է Հայաստանի ԳԱԱ Պատմության ինստիտուտում, 1980 թվականին հրավիրվել է գլխավորելու Հայաստանի կառավարությանն առընթեր Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման ու օգտագործման գլխավոր վարչությունում իր իսկ առաջարկությամբ հիմնված ուրարտագիտության բաժինը։

Ուրարտերենի իմացությունը զուգակցելով պրակտիկ հնագիտությանը և տիրապետելով ուրարտագիտության մեջ խորանալու համար խիստ անհրաժեշտ գերմաներեն, ռուսերեն նաև վրացերեն լեզուներին՝ գիտության շեմը ոտք դրած երիտասարդ գիտնականը կարճ ժամանակում կարողանում է զառնալ հեղինակություն, տարիներ շարունակ համարվելով ուրարտերենի լավագույն գիտակը Հայաստանում։ 1950 թ. Մ. Իսրայելյանը վերծանում է նույն թվականին հայտնաբերված Էրեբունիի հիմնարկման հայտնի արձանագրությունը առաջ քաշելով այն տեսակետը, որ Երևանի անունը ծագում է Էրեբունիից։ Սույն տեսակետը հետագայում գարձավ տիրապետող և դրա հիման վրա 1968 թ. մեծ շուքով տոնվեց Երևանի 2750-ամյակը։

Ականավոր հնագետը մասնակցել է Հայաստանի տարբեր բնակավայրերի պեղումներին, նկարագրել բազմաթիվ հնավայրեր, գտածո հուշարձաններ, տվել ուրարտերենի որոշ քերականական ձևերի բացատրությունները, ճշգրտել բազմաթիվ բառերի իմաստները, արդեն իսկ հրատարակված մի խումբ արձանագրությունների տեքստային տառադարձությունների մեջ կատարել էական շտկումներ, առաջարկել դրանց իմաստային նոր թարգմանությունները։

Անվանի հնագետը վերծանել է նաև մինչ այդ անհայտ գաղափարագրեր, կատարել դրանց գիտական թարգմանությունները, ճշտել գրականության և արձանագրությունների մեջ վկայված առանձին բնակավայրերի տեղադրությունը։ Հնավայրերի պեղման և ուսումնասիրության ընթացքում նրա գործունեությունից հատկապես նշելի է Էրեբունիի պեղումների ընթացքում ուրարտական «սուսի» կոչվող տաճարի հայտնաբերումը, չափագրությունը և պաշտամունքային այդ հուշարձանի կառուցվածքի ու նշանակության ճշտումը։ Սուսիի պեղումների ընթացքում նա հայտնաբերել և ուսումնասիրել է բազմաթիվ որմնանկարներ, բացահայտել դրանց նշանակությունը; իսկ տաճարի մոտքի մոտ գտնված երկու նույնական արձանագրությունները վերծանելով, ի հայտ է բերել ուրարտական դիցարանի՝ մինչ այդ գիտությանն անհայտ Իվարշա աստծո անունը, որը քացախում է ուրարտական դիցարանը ներկայացնող Վանի «Մհերի դռան» հայտնի արձանագրության մեջ։

Մ. Խորայելյանը կազմել, նկարագրել, չափագրել և գիտական ծանոթագրություններով օժտել տարբեր վայրերից հայտնաբերված՝ գիտությանը հայտնի ուրարտական բոլոր սեպագիր արձանագրությունները (ավելի քան 450 միավոր)։ Այդ արձանագրությունների հույժ կարևոր ու եզակի ժողովածուն (45 մամուլ) գիտնականի գլուխգործոցն է և ցավոք՝ դեռևս անտիպ։ Տպագրել է «Էրեբունի բերդ-քաղաքի պատմություն» մեծարժեք աշխատությունը (Երևան, 1971 թ.), գիտական և ընթացիկ մամուլում հրատարակել է մոտ 30 գիտական, նույնքան էլ հրապարակախոսական հոդվածներ։ Զբաղել է թողել մեկ տասնյակի չափ ուսումնասիրություններ, որոնց մեջ «Հայ հին արևել. լեռները», «Արարատյան դաշտի հնագույն քաղաքները», «Պատմական Արմավիրը ըստ ուրարտական արձանագրությունների», «Արգիշթի Ա-ի տարեգրությունները», «Ուրարտագիտության պատմությունն» և այլն։ Մ. Խորայելյանը իր գիտական ու քաղաքական տեսակետները պաշտպանող վերին աստիճանի սկզբունքային մտավորական, հասարակական գործիչ և քաղաքացի էր։ Նա երբեք չընկրկեց իր ժամանակներում սովորական դարձած ճնշումների և սպառնալիքների առաջ, որևէ զիջումով հետ չկանգնեց իր համոզմունքներից ու դիրքորոշումներից։ Առանձնապես ըմբոստանում էր Հայաստանից հայտնաբերված պեղածո արժեքները երկրից դուրս տանելու դեմ, պահանջում էր կազմել միութենական հանրապետություններ, հատկապես Ռուսաստան (Էրմիտաժ և Պուշկինի անվան թանգարան) և Վրաստան տեղափոխված պատմամշակութային արժեքների գիտացուցակները՝ դրանք անհապաղ հայրենիք վերադարձնելու համար։ Նրա ջանքերով ձևավորված հասարակական կարծիքի ճնշմամբ 1970-ականների կեսերից նման դեպքերը հասցվեցին նվազագույնի։

Անզիջում էր նաև պեղածո հուշարձանների պահպանության խնդրում։ Հանրապետության մամուլում տպագրված հոդվածներով հորդորում էր պեղման նպատակով հուշարձանը բացելուց հետո բախտի քմահաճույքին չթողնել, այլ պեղման գումարների մեջ նախատեսել նաև հուշարձանը պեղելուց անմիջապես հետո ամրակայելու (կոնսերվացիա) և պահպանելու համար նախատեսվող ծախսեր։ Այս հարցում իր դավանանքն էր՝ «ԵԹԵ հուշարձանը չպիտի կարողանք պահել, չպիտի պեղենք։ Իր ազնվական ու վսեմ խառնվածքով, պատկառանք ներշնչող էությամբ նա եղավ հայ գիտնականի արժանապատվությունը ամրակայող ու պահպանող եզակի անհատներից մեկը այդ դժվար ժամանակներում։

Ռ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ